

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ Աղա ՄԻՄՈՆՅԱՆ

Բանալիքառեր. Միջազգային և ՀՀ զբուաշրջություն, տնտեսություն, համախառն ներքին և ազգային արդյունք, հյուրանոցային և տեսություն, զբուաշրջային ցուցահանդեսներ, զբուաշրջային ինդուստրիա, զբուաշրջային արդյունք:

Ключевые слова. Международный туризм и туризм НКР, экономика, валовый внутренний и национальный продукты, гостиничное хозяйство, туристические выставки, туристическая индустрия, туристический продукт.

Keywords. International tourism and tourism of the NKR, economy, gross domestic and foreign products, hotel industry, tourist exhibitions, tourism industry, tourist product.

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СФЕРЫ ТУРИЗМА В АР А. СИМОНЯН

Туризм является одной из специфических сфер социально-экономического развития Арцаха. Следовательно, в последующие годы основной целью развития сферы туризма НКР станет создание эффективного и конкурентоспособного туристического продукта и выход на международный рынок туризма. Посредством развития сферы туризма станет возможным дальнейшее стимулирование и развитие социально-экономической и культурной жизни НКР, будет продолжен процесс вовлечения НКР в туристических путеводителях и пакетах Республики Армения.

THE MAIN TENDENCIES OF THE TOURISM SPHERE DEVELOPMENT IN AR A. SIMONYAN

Tourism is one of the specific spheres of Artsakh socio-economic development. Thus, the creation of an effective, competing product and the entrance to the international tourism market are sure to become the main target of the NKR tourism sphere development during the upcoming years. The tourism sphere development will contribute to the further promotion and development of NKR socio-economic and cultural life. The process of NKR insertion in the RA tourist guides and packages is going to continue

Զրուաշրջությունը հանդիսանում է Արցախի առցիպա-տնտեսականզարգացմանառանցքայինոլորտներից մեկը: Ուստիառաջիկա տարիներիհամար ՀՀ զբուաշրջության ոլորտի զարգացման հիմնական նպատակը կհանդիսանա՝ Արցախում արդյունավետ և մրցունակ զբուաշրջային արդյունքի ստեղծումն ու միջազգային զբուաշրջային շուկա արտահանումն: Զգբուաշրջությանոլորտի զարգացման միջոցով կիրանվի Արցախի համայնքներում սոցիալ-տնտեսականում շակութային կյանքի զարգացումը, կշարունակվի Լեռնային Ղարաբաղի շահագույն հարավային շրջայատան հիշանքապետության զբուաշրջային երթուղում և կազմակերպությունների առաջնային աշխատավայրերում առաջնային աշխատավայրերում:

Զբուաշրջությունը յուրաքանչյուր պետության տնտեսական զործունեության կարևոր բաղկացույցի մաս է, իսկ որոշ երկրներում այն կազմում է տնտեսության հիմնական շարժիչ ուժը և երկրի ներքին արդյունքի գլխավոր մասը:

Զբուաշրջությունը համաշխարհային տնտեսության ամենաշարժուն և շահութաբեր ոլորտներից է, որի զարգացման արագ տեմպերը և արտարժույթ ձեռք բերելու առավել մեծ հնարավորությունները, նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ երկրի տնտեսության առանձին ոլորտների, մասնավորապես, զբուաշրջային ինդուստրիայի ձևափորման ու զարգացման համար: Այն յուրահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն առանձին երկրների տնտեսություններում, այլ նաև միջազգային տնտեսական հարաբերություններում:

Զբուաշրջությունը առաջատար տեղ է զբաղեցնում ապրանքների և ծառայությունների համաշխարհային արտահանման ծավալում: Զբուաշրջային այցելությունների բանակին զուգահեռ աճում են նաև դրանից ստացվող նկամուտները՝ գերազանցնելով այլ ապրանքների և ծառայությունների արտահանումից ստացվող նկամուտները:

Տուրիզմի զարգացումը խթանում է տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացումը, ինչպիսիք են տրանսպորտը, կապը, առևտուրը, շինարարությունը, գյուղատնտեսությունը, սպառողական

ապրանքների արտադրությունը և հանդիսանում է տնտեսության վերակառուցման հետանկարային ուղղություններից մեկը:

Ներկայում համաշխարհային տնտեսական զարգացման մեջ զբոսաշրջության ոլորտին բաժին է ընկնում համախառն ազգային արդյունքի 6 տոկոսը, համախառն ներդրումների 7 տոկոսը, համաշխարհային սպառողական ծախսների 11 տոկոսը, հարկային մուտքերի 5 տոկոսը և յուրաքանչյուր 10-րդ աշխատանքային տեղը:

Համաձայն Միավորված Ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ ԶՀԿ) կանխատեսումների՝ մինչև 2020 թվականը համաշխարհային միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կաճի՝ հասնելով 1.8 մլրդ-ի, իսկ զբոսաշրջային ծախսների գումարը կազմի մոտ 2 տրիլիոն ԱՄՆ դոլար, աշխատողների թիվը՝ կանոնի 262 միլիոնի:

Ամենաշատ զբոսաշրջիկներ այցելում են Եվրոպա, սակայն աճ է գրանցվում նաև դեպի ասիական տարածաշրջան՝ առաջին հերթին Չինաստան: Տորիզմի աճն առանձնապես զգացվում է Չինաստանից, Ռուսաստանից ու Բրազիլիայից ավելացող հոսքերի հաշվին: Այսպիսով, ամենաշատ տուրիստ ապահովող են Չինաստանը, որը ծախսել է 102 մլրդ. դոլար՝ արտասահման տուրիստական ճանապարհությունների համար, Գերմանիան (83,8 մլրդ. դոլար), ԱՄՆ (83,7 մլրդ. դոլար), Մեծ Բրիտանիան (52,3 մլրդ. դոլար), Ռուսաստանը (42,8 մլրդ. դոլար), Ֆրանսիան (38,1 մլրդ. դոլար), Կանադան (35,2 մլրդ. դոլար), Իտալիան՝ 26,2 (մլրդ. դոլար):¹

Ամենաշատ տուրիստներ ընդունող են Ֆրանսիան՝ 83,7 միլիոն տուրիստ, ԱՄՆ՝ 74,8 միլիոն, Չինաստանը՝ 55,6 միլիոն, Իսլանդիան՝ 65,0 միլիոն, Իտալիան՝ 48,6 միլիոն, Թուրքիան՝ 39,8 միլիոն, Գերմանիան՝ 33,0 միլիոն, Մեծ Բրիտանիան՝ 32,6 միլիոն, Ռուսաստանը՝ 29,8 միլիոն, Մեկսիկան՝ 29,1 միլիոն:²

Վերջին 10 տարվա ընթացքում ԼՂՀ-ի զբոսաշրջության ոլորտում գրանցվել են զարգացման զգալի տեմպեր: Արցախն ունի զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ՝ հարուստ բնաշխարհ, պատմամշակութային ժառանգություն, հետաքրքիր պահանջման բնակչություն: ԼՂՀ-ի տուրիստական ռեսուրսներից առաջնային է համարվում պատմամշակութայինը, այնուհետև՝ բնականը: Առկա են հանրային ջրեր, որոնք կարող են նպաստել առողջարարական զբոսաշրջության զարգացմանը: Ուստի պետք է փորձել առավելացնել օգտագործել Արցախի հանդեպ սփյուռքահայերի և օտարերկրացիների ընդգծված հետաքրքրությունը:

<http://www.atorus.ru/news/press-centre/new/23019.html>

<https://34travel.me/post/most-visited-2016>

Այդ փաստը ապահովելու համար որպես կարևոր գործընթաց է դիտվում բնագավառի իրավական դաշտի կարգավորումը:

Զբոսաշրջության բնագավառի իրավական կարգավորման հիմքը դրվեց 2004թ. նոյեմբերի 24-ին, երբ ընդունվեց «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԼՂՀ օրենքը:¹ Բացի նշված օրենքից հետազոտում ընդունվեցին նաև մի շարք ենթաօրենսդրական ակտեր:

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակներն են.

1) մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային նկամտի ավելացման մեջ,

2) ապահովել համաշափ տարածքային զարգացումը,

3) նպաստել բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման:

Նախանշված նպատակները կարող են հասանելի դառնալ, եթե գործուն միջոցառումներ ձեռնարկվեն հետևյալ գործընթացների ապահովման ուղղությամբ:

1) զբոսաշրջային այցելությունների բանակի աճ,

2) զբոսաշրջությունից ստացված նկամտի ավելացում,

3) նոր աշխատատեղերի ստեղծում:

Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքանականության իրականացման շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Լեռնային Ղարաբաղի հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի ճանաչմանը: Մարքեթինգային քաղաքականությունը հիմնականում իրականացվել է երեք ուղղությամբ՝ համացանցի միջոցով (թվային), ԼՂՀ զբոսաշրջային արդյունքը միջազգային հեղինակավոր տուրիստական ցուցահանդեսներում

ներկայացմամբ և բազմաթիվ տպագիր տեղեկատվական գրականության հրապարակմամբ ու տարածմամբ։ Այդ ցուցահանդեսներում անվճար տարածվել են Արցախի գրուաշրջային թեմատիկայով պատրաստված և տպագրված մի շաբը գովազդատեղեկատվական նյութեր (գովազդային պայուսակներ, բրոշյուրներ, քարտեզներ և այլն):

Գրուաշրջային ներուժի քարոզության նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրուաշրջային արդյունքը ներկայացվել է հեղինակավոր միջազգային գրուաշրջային ցուցահանդեսներում՝ Մադրիդում, Փարիզում, Ռիմինիում և Լոնդոնում։

Նշենք, որ 2015 թվականին ԼՂՀ գրուաշրջային ներուժը ներկայացվել է Երևան քաղաքում «Ինտուր Էքսպո 2015» գրուաշրջային ցուցահանդեսին, «Արտադրված է Հայաստանում» ցուցահանդեսին, Դիլիջանում կայացած «Զրուաշրջությունը համախմբում է մշակույթները» ցուցահանդես-փառատոնին, Երևանում՝ «Երկրները մեկ հարկի տակ» ցուցահանդես – ֆորումին և «Արենի» գինու փառատոնին։

Հարավային գրուաշրջային ներթուղու զարգացման ծրագրի շրջանակներում ներգնա գրուաշրջությունը խթանելու և տեղի բնակչությանը լրացնից եկամուտներ ապահովելու, ինչպես նաև փառատոնների միջոցով համայնքների սոցիալ-տնտեսական կյանքը զարգացնելու նպատակով՝ 2015-2016 թվականների հունիսին Ամարաս վանքի շրջակայրում կազմակերպվել է «Թթի» փառատոն, իսկ հոկտեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղորդության գյուղում կազմակերպվել և անց է կացվել «Արցախյան գինու» փառատոնը։

Երկրի քաղաքացիների և գրուաշրջիկների համար հանգստի և ժամանցի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով իրականացվել են Շահումյանի շրջանի «Տաք ջուր» գրուաշրջավայրի բարեկարգման աշխատանքները։

Մոնիթորինգի արդյունքում ի հայտ է եկել Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելող գրուաշրջիկների թվաքանակի էական աճ։ Սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում դեպի Արցախ իրացվել են ավելի քան 1000 գրուաշրջային փաթեթներ։

Արցախ այցելող գրուաշրջիկների թվաքանակի ավելացման և կայուն աճի ապահովման համար շարունակվել է սերտ համագործակցությունը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի զարգացման հիմնադրամի, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի և ՀՀ տուրօպերատորների հետ՝ համատեղ ծրագրերի իրականացման և այդ ծրագրերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդգրկման ուղղությամբ։

Ներկա դրությամբ ԼՂՀ-ում գործում են 7 տուրօպերատորներ և 1 տուրագենս։

Արցախում կառավարության կողմից ընդունված գրուաշրջության զարգացման ծրագրերի շահակներում իրականացված միջոցառումները տարեցտարի նպատառում են Արցախի տնտեսության կայուն զարգացմանը։ Ավելացել է ֆինանսական միջոցների ներհոսքը

հանրապետություն և համապատասխանաբար պետական բյուջեն, խթանվել միջազգային գրուաշրջային շուկաներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինտեգրման գործընթացը։

Այն արդյունքները, որոնք մենք ունեցանք վերջին 10 տարվա ընթացքում, խոսում են կատարված աշխատանքների մասին, որի շնորհիվ այցելող տուրիստների քանակը 2007-2015թթ. աճել է 20-40 տոկոսով։ Ըստ ԼՂՀ արտաքին գործների նախարարության տվյալների՝ տասնհինգ տարվա ընթացքում ԼՂՀ են այցելել շուրջ 111500 գրուաշրջիկ։

Պատմական Արցախի ողջ տարածքը հարուստ է տարբեր դարերում կառուցված բազմազան հուշարձաններով։

ԼՂՀ տարածքում հաշվառված է մոտ 10000 հուշարձան, որից 2014թ. հունվարի 1-ի դրությամբ վկայագրված-փաստաթղթավորված է 4494 հուշարձան՝ նախորդ տարվա 4270-ի դիմաց։


Պետական պահպանության տակ առնված ճարտարապետական հուշարձանների (ներառյալ նվերնեցիներ, վանքեր) թիվը կազմում է 1600, որից՝ 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ 738-ը ուսումնաբարված է։

2015թ. հունվարի 1-ի դրությամբ ուսումնաբարված է 753 ճարտարապետական հուշարձան՝ նախորդ տարվա 738-ի դիմաց։

Հուշաբանների բախչվածությունը՝ ըստ շրջանների ներկայացված են ստորև¹:

Գծապատկեր 1

Հուշաբանների բախչվածություն՝ ըստ շրջանների 2015թ. (%-ով)



Գծապատկեր 1-ից երևում է,որ ամենաշատ հուշաբաններ ներկայում տեղակայվածն է ԼՂՀ Մարտակերտի շրջանում:

Վերջին տարիներին ԼՂՀ-ում զբոսաշրջության հետ զարգանում և բարելավվում են բոլոր ենթակառուցվածքները: Մինչև անկախության ձեռք բնորումը Լեռնային Ղարաբաղի հանրապետության տարածքում գործում էր 4 հյուրանոց, ապա անկախությունից հետո տարնգտարի կառուցվում են նոր հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, մշակույթի օբյեկտներ և գործում են 25-ից ավելի կահավորված հանգստյան գոտիներ:

Ըստ հյուրանոցների գործունեության մասին հաշվետվությունների՝ 2012 թվականին հանրապետությունում գործում էր 30 հյուրանոց՝ 1186 տեղ միաժամանակյա տարողությամբ: Ընդ որում՝ Ստեփանակերտ քաղաքում գործել է 21 հյուրանոց՝ 905 տեղ միաժամանակյա տարողությամբ:

2015թ. վերջի դրույթյամբ՝ հանրապետությունում գործում եր 46 հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝ 1300 ննջատեղով: Հանրապետությունում գործում են 25 հյուրանոց, 10 իջևանատուն, 4 զբոսաշրջային տուն, 3 ավանդական զյուղական տուն և 1 պանսիոն: 2016թ. վերջի դրույթյամբ՝ հանրապետությունում գործում է 44 հյուրանոցային տնտեսության օբյեկտ 1281 ննջատեղով.


Գործող հյուրանոցներից ընդամենը 3 հյուրանոց է որակավորված ԼՂՀ-ի կառավարությանն առնելի զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության (ներկայիս Էկոնոմիկայի նախարարության) կողմից: «Պարկ հոթել արցախ» և «Ավան շուշի պլազմա» հյուրանոցներին շնորհվել է «3-աստղանի» հյուրանոցի կարգ: «Արմենիա» հյուրանոցին շնորհվել է «4 աստղանի» հյուրանոցի կարգ². Զբոսաշրջիկները դժգոհում են, որ հյուրանոցները կենտրոնացած են Ստեփանակերտում: Սակայն այս տարի ամերիկահայ քարենքար Զորջ Մրկանջյանի միջոցներով փոքր հյուրանոցներ են բացվել չորս գյուղերում:

ԼՂՀ զբոսաշրջային այցելությունների թիվը ներկայացնում ենք հետևյալ գծապատկեր 2-ում:

¹ http://mineconomy.nkr.am/?page_id=571

² <http://www.karabakh.travel/hy/hotel/hotels/52/>

Գծապատկեր 2


ԼՂՀ զբոսաշրջային այցելությունների թիվը 2010-2016թթ.¹

Գծապատկեր 2-ից երևում է, որ ամենաշատ զբոսաշրջիկ Արցախ են այցելել 2015 թվականին՝ 16589: Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 13.3 տոկոս: 2016 թվականին Արցախ են այցելել միայն 13961 զբոսաշրջիկ: Վերջինիս թվաքանակի նվազումը կապված է Ապրիլյան քառօրյա պատերազմով, որը բացասական ազդեցություն է ունեցել Արցախի ամբողջ տնտեսության վրա, այդ թվում՝ նաև զբոսաշրջության վրա: Զբոսաշրջության ոլորտում անկումը կազմել է՝ շուրջ 20 տոկոս:

Տարեկան միջինում Արցախ են այցելում շուրջ 80 երկրների զբոսաշրջիկներ:

Զբոսաշրջիկների կողմից Արցախում ծախսված գումարները ներկայացված են

Գծապատկեր 3-ում

2010-2016թթ. ընթացքում Արցախ այցելած զբոսաշրջիկների կողմից ծախսված գումարները²

Գծապատկեր 3-ից երևում է, որ Արցախ այցելած զբոսաշրջիկների կողմից ամենաշատ ծախսված գումարը եղել է՝ 2013 թվականին՝ 7200 դրամ, իսկ ամենափոքրը՝ 2011 թվականին՝ 4100 դրամ:

2016 թվականին զբոսաշրջությունից ստացված եկամտները ԼՂՀ ՀՆԱ-ում կազմել է 1,2 տոկոս:

Նշենք նաև, որ Արցախ այցելողների 86.6 տոկոսը հայկական ծագում ունի: Նրանց շուրջ կեսը հայաստանի, մեկը քառրորդը՝ Ռուսաստանի քաղաքացիներ են: Զբոսաշրջիկների 42.4 տոկոսը Լեռնային Ղարաբաղ է ժամանել՝ հարազատներին և ընկերներին այցելության, 41.3-ը՝ հանգստի ու

¹ www.stat-nkr.am² www.stat-nkr.am

ժամանցի, և միայն 11.3 տոկոսը՝ գործնական նպատակներով: Մեկ զբոսաշրջիկն Արցախում գիշերեն է միջին հաշվով 9 օր՝ ծախսելով շուրջ 66 հազար 500 դրամ:

Սննդի ինդուստրիան Լեռնային Ղարաբաղում մեծ դեր է խաղում ինչպես տեղի բնակչության, այնպես էլ զբոսաշրջիկների համար: Ազգային խոհանոցը իրենից ներկայացնում է տվյալ ազգի մշակույթի հիմնական տարրը:

Երկրում գործում են ոնստորաններ, սրճարաններ և այլն, որոնք բավարարում են հաճախորդներին համեմ ուտեսածներով: Միջազգային զբոսաշրջության պրակտիկայում սնունդը, որպես կանոն, կապվում է տեղաբաշխման հետ:

Ոլորտի հետազա բարելավման համար, անհրաժեշտ է .

1. Հաշվի առնելով, որ ոլորտը հայտարարվել է զերակա ուղղություն և խիստ կարևոր է ոլորտի հետազա կայուն և արդյունավետ զարգացման ապահովումը, անհրաժեշտ են մի շարք բարեփոխումներ՝ ինչպես տնտեսվարման կազմակերպման, այնպես էլ օրենսդրական դաշտում:

2. Առաջիկա մի քանի տարիների ԼՂՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման հիմնական նպատակը պետք է հանդիսանա՝ Արցախում արդյունավետ և մրցունակ զբոսաշրջային արդյունքի ստեղծումն ու միջազգային զբոսաշրջային շուկա արտահանումը:

3. Ներգնա և ներքին զբոսաշրջության զարգացման համար անհարժեշտ է կիրառել միջոցառումներ (նրկարածամկետ վարկեր, հարկային արտոնություններ, փոխսառուցումներ և այլն), որոնց արդյունքում երկրի տարածքում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների գները կնվազեն և այդ ծառայությունները մրցունակ կլինեն տարածաշրջանային այլ երկրներում (Վրաստան, Թուրքիա և այլն) մատուցվող նմանատիպ ծառայությունների հետ:

4. Իրականացնել օրենսդրության հետազա կատարելագործում և ներդնել ծառայությունների որակի մոնիթորինգի և գնահատման համակարգ, որը կարող է պնտության և հանրության կողմից ոլորտում իրականացվող վերահսկողության կարևոր գործիք: Այս տեսանկյունից դրական է այն փաստը, որ կյուրանոցների և կյուրանոցային տնտեսությունների համար հաստատվել է այդ օբյեկտների որակավորման կարգը և համապատասխան չափորոշչները (սահմանված է մեկից հինգ աստղանի համակարգով որակավորում): Սակայն ներկայում ԼՂՀ-ում նման որակավորման գործնական անցել են ընդամենը 3 կյուրանոց: Ինչ վերաբերում է այն բանին, որ հանրությունը հնարավորություն ունենա վերահսկելու և միաժամանկ հավաստելու այդ կազմակերպություններում մատուցվող ծառայությունների որակը, ապա նման մեխանիզմներ ընդհանրապես բացակայում են: Այդ մեխանիզմների առկայությունը կարևոր խթան կիանդիսանա ծառայությունների որակի բարձրացման համար:

5. ՀՀ զբոսաշրջային շուկային Արցախի ինտեգրում, ակտիվ և արդյունավետ համագործակցության կապերի ստեղծում: Միջոցներ ձեռնարկել Արցախի զբոսաշրջային ներուժի մասին մշակված ամբողջ տեղենկատվությունը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գովազդական նյութերում և տեղենկատվական բազայում ընդգրկելու համար:

6. Զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է սնրու զբոսաշրջային համագործակցային հարաբերություններ հաստատել աշխարհի տարբեր, հատկապես, զարգացած երկրների հետ՝ կիրառելով նաև դրանց փորձը:

7. Անհարժեշտ է հնարավորինս միջոցներ հատկացնել Արցախում զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա, քանի որ Արցախը հարուստ չէ մեծարանակ բնական ռեսուրսներով, ուստի պետք է շեշտը դնել բնակչիմայական ռեսուրսների, տեսարժան վայրերի վրա, ինչն էլ իր հերթին կնպաստի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը զբոսաշրջության համար նպաստավոր նրկիր դառնալուն:

8. Խթանել շրջաններում կյուրանոցային տնտեսության օբյեկտների բանակի մեծացմանը, ինչպես նաև որակի բարձրացմանը: Հաշվի առնելով զյուղական բնակավայրերում զբոսաշրջության զարգացման տեսդենցը (հատկապես զյուղական ավանդական տների օրինակներով), յուրաքանչյուր զյուղում ազգային ոճին բնորոշ պատրաստել նման զյուղական տներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Буйленко В.Ф., «Туризм», учебник. Ростов-на-Дону, 2008г., -416с.
2. Кусков А.П., Джалаадян Ю.А. Основы туризма., -М.: КНОРУЦ, 2008г.-400с.
- 3.«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին»ԼՂՀ օրենք՝ ընդունված՝ 2004թ.նոյեմբերի24-ինՀՕ-147,
- 4.«ԼՂՀ2016թվականիպետական բյուջեի մասին»ԼՂՀ օրենք՝ ընդունված 2015թ.դեկտեմբերի23-ինՀՕ-59-Ն,
5. «ԼՂՀ2017 թվականիպետական բյուջեի մասին»ԼՂՀ օրենք՝ ընդունված2016թ.դեկտեմբերի24-ինՀՕ-36-Ն,
- 6.ԼՂՀ կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի«ԼՂՀ2017-2019թթ.Պետականմիջնաժամկետծախսերիծրագիրըհաստատելումասին»N 575-Նորոշում,
- 7.ԼՂՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի «2015թ. Զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին»N 69-Նորոշում
- 8.ԼՂՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի «2016թ. Զբոսաշրջության ոլորտի զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը հաստատելու մասին»N 92-Նորոշում
9. <http://mineconomy.nkr.am>,<http://www.karabakh.travel/hy/>, www.stat-nkr.amկայք էջեր:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Աղա Սիմոնյան, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ավագ դասախոս
igor.hayrapetyan@mail.ru

Հոդվածը տպագրության է նրաշխավորել խմբագրական կոնգրեսի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը: